

ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉԵԱՆԻ ԴԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի սկզբնաւորումը աղերսւում է Մխիթար Սեբաստացու եւ նրա առաջին աշակերտների անուան հետ: Դեռեւս Մեթոնում եղած շրջանում (1702-1715 թթ.) եւ Ս. Ղազարում հաստատուելուց քիչ յետոյ (1717-1730 թթ.) միաբանութիւնն ունէր մի քանի տասնեակ գրչագիր մատեաններ: Սակայն, ինչպէս ճիշտ նկատել է Հայր Սահակ Ճեմճեմեանը, մինչեւ ԺԸ դարի 60ական թուականները «Ս. Ղազարի վանքը չունէր դեռ ձեռագրական հարուստ հաւաքածոյ. այս ուղղութեամբ շարժումը թէեւ սկսած էր, բայց հեռու էր կատարելութենէ»¹: Ս. Ղազարի ձեռագրական այսօրուայ հարուստ հաւաքածուի (աւելի քան 4000 գրչագրեր) հիմնական կորիզը ձեւաւորուեց Ստեփանոս Մելգոնեանի արքայապետութեան շրջանում (1750-1799): Միաբանութիւնը առաւելապէս նրան է պարտական մատենադարանի ստեղծման եւ նրա կարեւորագոյն գրչագրերի առկայութեան համար: Միաբանութեան ընդհանրական երկրորդ արքայապետը նախանձելի հաստատակամութեամբ ու հետեւողականօրէն շուրջ 50 տարի մէկիկ-մէկիկ ժողովեց հարիւրաւոր ձեռագրեր, ամբողջական հաւաքածոներ, գնեց, ընդօրինակել տուեց տասնեակ ձեռագրեր: Դեռեւս 1752 թուին Հայր Ղուկաս Սեբաստացին նրա յատուկ յանձնարարութեամբ մեկնում է Հայաստանի ներքին գաւառները՝ ձեռագրեր գտնելու, սակայն վերահաս մահը խանգարեց այդ նպատակի իրականացմանը: Նոյն թուականին Հայաստան է ուղարկւում Հայր Գէորգ Պաղտատեանը, որը կարողանում է մի քանի տաս-

¹ ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Հ. Միքայէլ Զամչեան եւ իր Հայոց պատմութիւնը, Վենետիկ, 1983, էջ 19, 25:

նեակ ձեռագրեր ուղարկել Ս. Ղազար: 1757 թուականին Հայր Մկրտիչ Անանեանը 50, իսկ 1766 թ. Հայր Անանիա Ճամպազեանը Կ. Պոլսից 15 ձեռագիր մատեաններ են ուղարկում Ս. Ղազար: Նոյն շրջանում Տրապիզոնից Վենետիկ տասնեակ ձեռագրեր է ուղարկում խոտորըղուցի Տէր-Յակոբ Ղազարեանը: Ս. Ղազար են տեղափոխում նաեւ Հռոմի Ս. Մարիամ Եգիպտացւոց Հայկական հիւրանոցի ձեռագրերի մեծ մասը՝ շուրջ 26 գրչագրեր²: Բացի այդ, կատարում են նաեւ բազմաթիւ արժէքաւոր եւ եզակի ձեռագրերի ընդօրինակութիւններ: Այսպէս, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Գրիգոր Պասմաճեանի (1764-1773) թուղթուղթեամբ Մխիթարեաններն ընդօրինակում են պատրիարքարանի ընտիր ձեռագրերը: 1772 թուականին մայր Աթոռի միաբան Սողոմոն Վարդապետի միջոցով փորձ է կատարում թափանցել նաեւ Ս. Էջմիածնի ձեռագրատուն՝ ընդօրինակութիւններ կատարելու միտումով, սակայն ապարդիւն: Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմէոն Ա. Երեւանցին (1763-1780) խափանում է այդ ճիգը: Այսպիսով, ԺԸ դարի 50-60ական թուականներին գնելու, նուիրատուութեան, ընդօրինակութեան, այլ ուղիներով եւ անասելի զոհողութիւնների գնով Ս. Ղազարում ստեղծւում է ձեռագրական մի պատկառելի հաւաքածու³:

Ս. Ղազարի Հայրերն ձեռագրերի հարուստ ու անկրկնելի հաւաքածուի ստեղծման գործում իր անուրանալի աւանդն է ունեցել նաեւ ականաւոր պատմաբան, քերականագէտ, աստուածաբան Հայր Միքայէլ Վարդապետ Չամչեանը (1738-1823): Այս ուղղութեամբ Չամչեանի գործադրած ջանքերն ակներեւ են նրա գործունէութեան բոլոր շրջաններում՝ այն ժամանակ, երբ նա դեռեւս հոգեւոր հովիւ էր Բասրայում, եւ նաեւ այն ժամանակ, երբ որպէս Մխիթարեանների մեծաւոր մշտապէս բնակւում էր Կ. Պոլսում: Անշուշտ, Չամչեանը հիանալի էր գիտակցում ձեռագիր մատեանների դերն ու նշանակութիւնը, նա շատ լաւ գիտէր դրանց մշակութային անանց արժէքը: Սակայն նրա համար ձեռագրերը հաւաքելն ու Ս. Ղազարում կուտակելը ինքնանպատակ չէր: Նա դրա մէջ գաղափար էր տեսնում, մի մեծ ու վեհ նպատակ՝ Ս. Ղազարում ատաղձներ կուտակել առաւել նշանակալից Հայագիտական ու աստուածաբանական ուսումնասիրութիւններ

² Տե՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., նշ. աշխ., էջ 25-27:

³ «Ս. Ղազար Միքարեան Մայրավանք», Վենետիկ, 1966, էջ 60:

կազմակերպելու համար, որին եւ արդէն ձեռնամուխ էին եղել միաբանութեան կարող ոյժերը:

Յայտնի է, որ 1769 թ. Ապրիլին Ստեփանոս արքահայրը նրան շնորհել է վարդապետական գաւազան եւ նշանակել Բասրայի հայ կաթողիկ համայնքի հոգեւոր առաջնորդ, որը նա վարեց մինչեւ 1775 թուականի սկզբները⁴: Այս տարիներին է, որ Չամչեանը իբրեւ քարոզիչ հնարաւորութիւն է ունեցել ազատօրէն ճանապարհորդելու եւ ծանօթանալու Բասրա, Բաղդատ, Հալէպ, Դամասկոս, Բէյրութ եւ այլ վայրերում գտնուող հայկական գաղթավայրերին: Չամչեանին չի բաւարարել միայն հոգեւոր առաջնորդի գործունէութիւնը. նրա կոչումը հնարաւորութիւն էր տալիս ոչ միայն մօտիկից ծանօթանալու հայ ժողովրդի վարք ու բարքին, հոգսերին, այլեւ նրա հոգեւոր պահանջմունքներին: Նա առաջիններից մէկն էր, որ հասկացաւ, թէ հայ ժողովրդի տարրաբաժան հատուածներին ազգային ինքնագիտակցութիւն ներարկելու, նրանց կորստից փրկելու եւ ազգային ու հոգեւոր պահանջմունքները բաւարարելու ամենահիմնական միջոցներից մէկը կարող էր ծառայել հայոց համադրական պատմութեան ստեղծումը: Այս գաղափարը նրա մէջ հասունացաւ ժողովրդի հետ ամէնօրեայ ուղղակի շփման մէջ մտնելու հետեւանքով:

1761 թուականին, երբ նա դեռեւս սարկաւազ էր, աւագ եղբայրը՝ Յակոբոս Վարդապետ Չամչեանը, Կ. Պոլսից մտահոգաբար գրում էր. «Աղաչեն բազումք զի արասցուք զՊատմագիրք ազգիս Հայոց, որ է փառք, ասեն, ազգին եւ փառք վանաց ձերոց: Եթէ չարադրիցէք զգիրք ինչ, որով ամենեքին իմասցին՝ թէ որպիսի ինչ իցէ ազգն մեր եւ որպէս եկեալ: ... Արարէք եւ զագգիս Հայոց, պարզ չարադրութեամբ...»⁵: Նոյն մտահոգութեամբ է լի նաեւ Չամչեանի կարգակից Հայր Սուքիաս Աղամալեանի նամակը Մադրասից, երբ 1770 թ. Յուլիսի 25ին գրում է Աբբահօրը. «յղեսլիք... մանաւանդ եթէ տպագրեալ իցէ նոր գիրք Պատմութեանց..., որոց եթէ տասն արկեղք եւս լինիցին՝ առնուն աստ»: Նոյն Վարդապետը մէկ տարի անց՝ 1771 թուականին, կալկաթայից գրում է, թէ ժողովրդին այլեւս քիչ է հետաքրք-

⁴ Տե՛ս ՌԻԹՈՒՋԵԱՆ Ա. Ա., Միքայէլ Չամչեան (կեանքի եւ գործունէութեան համառոտ ուրուագիծ), «Լրաբեր» (հասարակ. գիտ.), 1988, Նոյ. 9, էջ 72-73:

⁵ ԶԵՄԶԵՄԵԱՆ Հ. Ա., նշ. աշխ., էջ 14-15:

րում Սաղմոսարան, ժամագիրք եւ այլն, այլ «զբառգիրքէ նոր, քերականութիւն եւ զայլ նորանոր գրեանս, մանաւանդ Պատմութեանց»։ Նոյն մտահոգութեամբ է լի նաեւ Գրիգոր Ուղտեանցի նամակը Վիեննայից»։ «Պատմութիւն հայու վար, օր մը առաջ ուղարկես»⁶։ Բասրայում եւ Բաղդատում նոյնպէս, ուր պաշտօնավարում էր Մ. Չամչեանը, ժողովուրդը տրտնջում էր ու զարմանում, «թէ զիարդ այսչափ ամս նոր ինչ գիր ոչ ել ի վանաց մերոց»։ Այնքան շատ էին զարմացական հարցումները, որ նա անգամ խոստովանում է, որ «ես իսկ նեղեալ եւ ձանձրացեալ ի բազում տրտնջանաց նոցա, զի գրեթէ ամենեքին տրտնջեն ի վերայ այսր»։ Առանց յապաղելու Չամչեանը կրկնուող այս խնդրանքները փոխանցում է Ս. Ղազար. «Առանց տպագրութեան նոր գրեանց՝ տրտունջ սոցա ոչ վերջանայ եւ խնդրեալն սոցա է... եւ յաւէտ եւս գիրք Պատմութեանց Հայոց, գոնէ համառօտիւ շարադրեալ, որ ոչ է անկարելի»⁷։

Մ. Չամչեանն առաջիններից մէկն էր հայ մտաւոր կեանքում, որ հասկացաւ, թէ պէտք է առանց ժամանակ կորցնելու ձեռնամուխ լինել Հայոց համադրական պատմութեան ստեղծման աշխատանքներին։ Հետաքրքիր է, որ այդ շրջանում նա չէր էլ մտածում նման գործի գլուխ անցնելու, անձամբ զբաղուելու պատմութեան շարադրմամբ։ Չամչեանը չափազանց համեստ կարծիք ունէր իր ունակութիւնների ու կարողութիւնների մասին։ Միւս կողմից նա շատ լաւ էր հասկանում, որ նման մի մեծածաւալ ու պատասխանատու գործ հնարաւոր էր գլուխ բերել միայն Ս. Ղազարում, միմիայն այդ հաստատութեան ուսումնասէր ու գրասէր, հայրենանուէր միջնորդւում։ Իսկ միակ անձը, որ կարող էր իրականացնել ազգային այդ մեծ ու վեհ գաղափարը, նրա կարծիքով կարող էր լինել միայն Հայր Մկրտիչ Անանեանը՝ նոյն օրերի Մխիթարեան միաբանութեան փայլուն աստղը։ Իսկ որպէսզի Մկրտիչ Անանեանը կամ որեւէ մէկ ուրիշը կարողանար ստեղծել նման մի կարեւոր աշխատանք, նախեւաւ աջ Ս. Ղազարում անհրաժեշտ էր ստեղծել նպաստաւոր պայմաններ։ Չամչեանը շատ լաւ էր հասկանում, որ նման մեծածաւալ ու համապարփակ Հայոց պատմութեան գիրք կարող էր ստեղծուել միայն մի դէպքում, եթէ վանքի Մատենադարանում

⁶ ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., անդ. էջ 17-18:

⁷ ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., անդ. էջ 18-19:

ի մի հաւաքուէին Հայոց պատմութեան վերաբերեալ բոլոր մատեանները, յիշատակարանները, ժամանակագրութիւնները, անհրաժեշտ վաւերագրերը: Սակայն, Պատմութիւնը շարադրելուց առաջ հարկաւոր էր կուտակել անհրաժեշտ ատաղձներ՝ գրաւոր ու տպագիր սկզբնաղբիւրներ: Ահա այս մտահոգութեամբ է, որ Չամչեանը նախաձախնդրօրէն ձեռնամուխ է լինում այդ անհրաժեշտ ատաղձները գտնելու եւ դրանք Ս. Ղազար ուղարկելու աշխատանքներին: Երիտասարդ քարոզիչը 1771 թ. Սեպտեմբերի 18ին մի ընդարձակ նամակ է ուղարկում արքահօրը, ուր ներկայացնում է Ս. Ղազարում գրչագիր մատեաններ հաւաքելու չափազանց հետաքրքիր մի ծրագիր: Նա առաջարկում էր երկու միաբաններ ուղարկել Հայաստանի վանքերը՝ ձեռագրեր ընդօրինակելու համար: Արքահայրը արդարացի ու վայելուչ է համարում Չամչեանի այս առաջարկը եւ խոստանում նպաստաւոր կացութեան դէպքում իրականացնել այն: Լսելով, որ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքն հարուստ է գրչագիր մատեաններով՝ Չամչեանը 1770 թուականի Փետրուարի 25ին յատուկ նամակ է գրում Նոր Զուղայի հոգեւոր առաջնորդ Մկրտիչ Վարդապետին եւ թախանձում գնելու կամ ընդօրինակելու միջոցով իրեն տրամադրել մի շարք պատմիչների աշխատութիւններ: Յաւօք, Չամչեանի առաջարկած ցանկը մեզ չի հասել, կարծում ենք, որ այն պէտք է փնտռել Նոր Զուղայի վանական դիւանում: Նկատի ունենալով սոյն նամակի ծրագրային բնոյթը, այն մէջ ենք բերում առաւել ընդարձակ հատուածով. «Հարկ եղաւ մեզ որոնել զձեռագիրս Պատմութեան Հայոց, առ ի կարգել զայն ըստ պատշաճի, եւ ի լոյս ընծայել ազգիս մերոյ արժանապատում պատմագիրք մի: Եւ զի լուայ ես աստ, թէ գտանին ի Զուղայ ձեռագիր Պատմագիրք Հայոց, բազում յարգանք աղաչեմ զսրբութիւն Ձեր առնել մեզ զչնորհս այս մեծ, որոնել ի վանորայս կամ յայլ տեղիս, եւ գտեալ զայնս առաքել առ մեզ, եւ որչափ ինչ արժանի գին խնդրի պատրաստ եմք վճարել: Իսկ եթէ որք ունին՝ ոչ կամիցին վաճառել, եթէ հնար է՝ տալիք անսխալ օրինակել զայս միցին վաճառել, եթէ հնար է՝ տալիք անսխալ օրինակել զայս միցին վաճառել, եթէ հնար է՝ տալիք անսխալ օրինակել զայս միցին վաճառել, եթէ հնար է՝ տալիք անսխալ օրինակել զայս միցին վաճառել»⁸, ինչպէս ակներեւ է այս յոյժ կարեւոր նամակից՝ Չամչեանը երկու ճանապարհ է մատնացոյց արել այդ ձեռագրերը ունենալու՝ վաճառելու եւ ընդօրինակելու: Հետաքր-

8 ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., նշ. աշխ., էջ 16:

քիր է նաեւ այն, որ նա յստակօրէն մատնացոյց է անում հիմնական նպատակը՝ «լոյս ընծայել ազգիս մերոյ արժանապատում պատմագիրք մի»։ Յաւօք, Մկրտիչ Վարդապետը չի արձագանքել Չամչեանի այս միւս նամակ-խնդրանքներին եւ դրանով իսկ փաստօրէն մերժել է նրա խնդրանքը։ Չամչեանը չի վհատուում եւ նորանոր տեղեկութիւններ է հաւաքում Հայաստանի վանքերում պահուող ձեռագրերի մասին։ «Ստուգիւ տեղեկացայ աստի բազմաց, թէ ի գաւառն Վան բազում եւ անհամար ձեռագիրք Հայոց գտանին ի վանորայս։ Բայց ոչ տան, ասեն, զայնս ումէք, եւ մեզ չէ հնար գնոսին ի ձեռս մեր բերել, բայց եթէ ոք ի մէնջ գնասցէ անդ»⁹ «- գրում է նա աբբա՛օրը 1770 թ. Հոկտեմբերի 1ին։ Մէկ այլ առիթով նա նոր տեղեկութիւն է փոխանցում Ս. Ղազար. «Բազում ականատեսք պատմեն, թէ բազում ձեռագիրք են ի վանս, որ ի լեառն Բջնոյ յերկրին Նրեւանոյ, եւ ի լերինն Հաղբատոյ, եւ յայլեւայլ տեղիս, մանաւանդ ի վանս Ճուղայոս»¹⁰։ Բացի օգտաշատ տեղեկատուութիւնից, Չամչեանը Ս. Ղազար է ուղարկել կամ 1775 թուականին ինքն է տարել մի շարք արժէքաւոր ձեռագիր մատեաններ, որ նրան նուիրել էին կամ ինքն էր գնել։ 1770 թ. Մայիսի 11ին նա մանրամասն նամակ-գեկուցագիր է ներկայացրել Ստեփանոս Մելգոնեանին՝ այդպիսի թանկարժէք ձեռքբերումների վերաբերեալ։ «1. Գտի զԱւետարան մի երկաթագիր իբր 800 ամաց եւ ետու զայն բերել ի վանս»։

2. Գտի զՄեկնութիւն Յովհաննու Աւետարանին երկաթագիր 600 ամաց, զոր արարեալ է Նանայի Ասորոց Վարդապետի, եւ ապա թարգմանեալ ի հայս»¹¹։ Մխիթարեանների ձեռագրացուցակների ուսումնասիրութիւնից պարզեցինք, որ Չամչեանի յիշատակած երկաթագիր Աւետարանը 1205 թուականին խարբերդում կոզմա գրիչի կողմից է ստեղծուել։ Խիստ արժէքաւոր այս գրչագիրը Չամչեանի խորհրդով վանքին է նուիրել Աթանաս

⁹ ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՆԻ, Մայր դիւան Մխիթարեանց վեմետոյ ի Ս. Ղազար, 1707-1773, Վենետիկ, 1930, էջ 264։

¹⁰ Նոյն տեղում։

¹¹ ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՆԻ, նշ. աշխ., էջ 267։

Զուղայեցու որդին՝ Դանիէլ Գասկեցին¹²։ Առաւել արժէքաւոր է ու հին Նանա Ասորու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» երկաթագիրը։ Այն գրուել է 1155 թ. Ամիդում։ Ձեռագիրը պատկանել է Զուղայեցի Հեքիմ Ծատուրի Օրբելեանին, որը 1773 թուականին Չամչեանի խորհրդով այն նուիրել է Ս. Ղազարին¹³։ Նոյն Հեքիմ Օրբելեանը, դարձեալ Չամչեանի խորհրդով, Մխիթարեան Մատենադարանին է նուիրել ԺԳ դարի «Խորհրդատետր - Գիրք ձեռնադրութեանց»¹⁴ եւ 1491 թ. «Յայսմաւուրք»¹⁵։ Իր անձնական գումարներով Չամչեանը Բասրայում գնել է 1661 թ. «Շարական»¹⁶, ԺԴ դարի մի ձեռագիր «Մաշտոց»¹⁷, 1775 թ. գարնանը աւարտուում է Ս. Չամչեանի պաշտօնավարութիւնը եւ նա վերադառնում է Ս. Ղազար եւ վանքի Մատենադարանին յանձնում վերանշուած վեց արժէքաւոր ձեռագրերը։ Յետագայում, երբ չափազանց ծանրաբեռնուած էր հայագիտական ուսումնասիրութիւններով եւ հրապարակ էր իջեցնում իր նշանաւոր «Պատմութիւն Հայոցի» հատորները՝ հեռաւոր Նոր Զուղայից իր բարեկամ Յարութիւն Խասակեանի միջոցով ստանում է Խաչատուր Զուղայեցու «Գիրք հակիրճ վստան ձառագրութեան Պարսից աշխարհի» աշխատութիւնը եւ նուիրում Մատենադարանին¹⁸։ 1789 թ. Սեպտեմբերից առողջական ստիպումով Չամչեանը մի առ ժամանակ բնակւում է Հունգարիայի (Տրանսիլվանիայի) Պաշպալով քաղաքում, ուր մնում է մինչեւ 1790 թ. Ապրիլը։ Այս ընթացքում նա ծանօթանում է տեղում գտնուող հայկական մի շարք գրչագրերի հետ։ Նրա յորդորներով Գրիգոր Լուսիկեանը Մատենադարանին է նուիրում 1410 թ. Նախիջևանում գրուած Զրա Մխիթարիչ Ա-

- 12 Տէ՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի միջնաբնակ ի վեկտիկ, հտ. Ա., Վենետիկ, 1914, էջ 398 (այսուհետեւ՝ Ցուցակ Ձեռագրաց)։
- 13 Տէ՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ը., Վենետիկ, 1998, էջ 509։
- 14 Տէ՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., նոյնը, հտ. Դ., Վենետիկ, 1993, էջ 1022։
- 15 Տէ՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., նոյնը, հտ. Ե., Վենետիկ, 1995, էջ 145։
- 16 Տէ՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., նոյնը, հտ. Դ., էջ 327։
- 17 Տէ՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., եւ ՍԱՐԳԻՍԵԱՆ Գ., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Գ., Վենետիկ, 1966, էջ 207։
- 18 Տէ՛ս ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Զ., 1996, էջ 241։

պարանցու «Գիրք Տրամաբանութեան» ձեռագիր-բնագիրը¹⁹, իսկ Պաղտա-սար Ղլըճեանց Եւդոկիացին՝ Ֆրա Մարթինի «Ժամանակագրութիւն»ը, որը հափազանց արժէքաւոր մի ձեռագիր է, սա Ներսէս Պալիեցցի հայերէն թարգմանութեան բնագիրն է կատարուած 1348ին, Աւինիոնում²⁰:

1793 թուականին Չամչեանի միջոցով վանքի մատենադարանը համալրոււմ է մի արժէքաւոր «Պատմագիրք Հայոց» ժողովածուով, որը պարունակում է՝ Ստեփանոս Օրբելեանի, Վարդան Վարդապետ Արեւելցու եւ Թովմա Արծրունու պատմագրութիւնները: Ժողովածուն կազմուել է 1514 թուականին, այն պատկանել է Զուղայեցի Յարութիւն իսահակեանին: Չամչեանի առաջարկով վերջինս 1793 թ. Յուլիս 6ին ձեռագիրը նուիրել է մատենադարանին²¹: Նոյն թուականին՝ Տրիեստում, Չամչեանը Յարութիւն արքեպիսկոպոս Բասենցուց նուէր է ստացել Եւսեբիոս Կեսարացու, «Պատմութիւն եկեղեցական» արժէքաւոր ձեռագիրը (Ժէ դար) եւ յանձնել վանքին: 1795 թուականից Չամչեանը ընդմիջտ տեղափոխոււմ է Կ. Պոլիս եւ ստանձնում տեղի Մխիթարեանների մեծաւորի պաշտօնը²²: Այստեղ եւս նա շարունակում է ձեռագրերի հաւաքման եւ դրանք Ս. Ղազարի Մատենադարան ուղարկելու աշխատանքները: Այսպէս 1799ին նա Ս. Ղազար է ուղարկում իր հին բարեկամ Յարութիւն իսահակեանից ստացած Ժէ դարի մի գրչագիր՝ Եւսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցական»ը²³, իսկ 1800 թուականին՝ Ռափայէլ ամիրա Մուրադեանի կողմից ստացուած 1661 թուականի մի Աւետարան²⁴: Մխիթարեան Մատենադարանին Չամչեանի միջոցով յանձնուած ձեռագրերից թերեւս ամենաարժէքաւորը ԺԱ դարի ճառընտիրն է, գրուած Հռոմկայում: Ձեռագիրը պատկանում էր Կ. Պոլսում շատ նշանաւոր Գէորգ դպիր Տէր-Յովհաննիսեանին: Յայտնի է, որ Գէորգ դպիրը կամ Պալատեցին, ինչպէս ինքն էր իրեն անուանում, մեծ համակրանք ունէր Մխիթարեանների հանդէպ եւ մի քանի տասնեակ ձեռագրեր է նուիրել Ս. Ղազար-

19 ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ը., էջ 379:

20 ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ը., էջ 356-357:

21 ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Զ., 1996, էջ 44:

22 ՈՒԹՈՒՋԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 81:

23 ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ը., էջ 245:

24 ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ա., 1914, էջ 466:

րի Մատենադարանին²⁵։ Եւ ահա, 1810 թուականին, Զամչեանի միջոցով նա Ս. Ղազարին է տրամադրում այդ թանկագին ճառընտիրը²⁶։ Նոյն ժամանակ ականաւոր պատմաբանը մի վերջին նպաստն է բերում Մխիթարեան Մատենադարանին՝ նրան նուիրելով Կիւրեղ Աղեքսանդրացու երկերի ընտիր ժողովածուն՝ գրուած 1685 թուականին²⁷։ Բացի նշուած 15 գրչագիր մատենաներից, նա անձամբ կատարել է մի ընդօրինակութիւն։ 1800 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ձեռագրերից մէկում յայտնաբերել է Վարդան Վարդապետ Անեցու, «Վասն կառաց աստուածութեան» ներբողը, ընդօրինակել է այն եւ ուղարկել Ս. Ղազար²⁸։

Անշուշտ նշուած 16 գրչագիր մատենաներով չի սահմանափակուած Զամչեանի բերած նպաստը Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի ստեղծման գործին։ ԺԸ դարի վերջերին եւ ԺԹ դարի սկզբներին Մատենադարանում հանգրուանած շատ ձեռագրերի անհրաժեշտ տեղեկանքներում բացակայում են դրանց ստացման հանգամանքների նկարագրութիւնները։ Եւ քանի որ դրանց մեծ մասը ստացուել է Կ. Պոլսից, կարելի է ենթադրել, որ տեղի Մխիթարեանների մեծաւոր Զամչեանը խաղացել է ոչ երկրորդական դեր՝ դրանք Ս. Ղազար ուղարկելու գործում։

Զամչեանի եւ միւս Մխիթարեանների ջանքերը՝ Ս. Ղազարի Մատենադարանի ստեղծման ուղղութեամբ կորստից փրկեցին շատեւջատ գրչագիր մատենաներ, որոնք չբաժանեցին անդառ-

25 ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., Զ. Միքայել Զամչեան եւ իր Հայոց պատմութիւնը, էջ 22-25։

26 ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Բ., էջ 183։

27 ՃԵՄՃԵՄԵԱՆ Զ. Ս., Ցուցակ Ձեռագրաց, հտ. Ը., էջ 313։

28 ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Ամեցի Վարդամ Վարդապետ, տե՛ս «Բազմավէպ», 1919, 6, էջ 164-169։

նալիօրէն կորստեան մատնուած ուրիշ շատ ձեռագրերի տխուր ճակատագրերը: Մխիթարեանների մշակութապահպան դերի գնահատումը արժանի է լուրջ ուշադրութեան եւ կարող է առանձին ուսումնասիրութեան նիւթ ծառայել:

ԱՂԱԽՆԻ ՈՒԹՈՒՋԵԱՆ